

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 3/12

Քաղ. Երեւան

28 փետրվարի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Հ. Արզարյան, Ա.Գ. Շահինյան և Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) իր 2012թ. հունվարի 25-ի նիստում (արձանագրություն N 2.1) քննարկեց «Խարկովսկայա բիսկվիտնայա ֆաբրիկա» ընկերության ներկայացուցիչ Ա. Գալոյանի կողմից 2011թ. դեկտեմբերի 26-ին ներկայացված «Маркиза Лыжа» (հայտի համարը IR 1045469) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերը և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 87-րդ կետի 2-րդ «ա», 106.1-ին կետի «ա», 115-րդ կետի 1-ին, 117-րդ կետի 10-րդ ենթակետերը, համաձայն որոնց գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան նույնական և նույնատիպ ծառայությունների համար Հայաստանի Հանրապետությունում ավելի վաղ գրանցման հիման վրա պահպանվող շփոթելու աստիճան նման "Սոնարգո" ՓԲԸ (Երևան, Միկոյան 17/2, N 16352) շփոթելու աստիճան նման բառային ապրանքային նշանի առկայության պատճառով, քանի որ նշաններից մեկը մտնում է մյուսի մեջ, տվյալ դեպքում գրանցված

"ՄԱՐԿԻԶԱ" (ռուս.) բառը մտնում է հայտարկվող "ՄԱՐԿԻԶԱ ԼՈՒԻԶԱ" (ռուս.) բառային ապրանքային նշանի մեջ:

Բողոքարկողը համաձայն չէ կրկնական փորձաքննության որոշման հետև և բողոքի մեջ ներկայացրել է իր փաստարկները: Բողոքում նշված է, որ «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կանոնների» 97-րդ կետի համաձայն՝ «Բառային նշանների նմանությունը կարող է լինել ձայնային (հնչյունային), գրաֆիկական (տեսողական) և իմաստային:

Ստորև ներկայացված են բողոքարկողի հիմնավորումները հայտարկված և հակադրված ապրանքային նշանների ձայնային, գրաֆիկական և իմաստային տարբերության վերաբերյալ:

Հայտարկված «Маркиза Льюиза» ապրանքային նշանը իրենից ներկայացնում է բառային ապրանքային նշան՝ բաղկացած 2 բառային տարրերից, որոնք տեղակայված են մեկ գծով և որով պայմանավորված է հայտարկված նշանի հորիզոնական դիրքը:

Հայտարկված նշանը կատարված է Times New Roman կիրիլիցա տառատեսակով, ընդ որում առաջին՝ «М» «Л» տառերը, մեծատառ են, ի տարբերություն մնացած տառերի, ինչն էլ գրավում է ուշադրությունը նշանի այդ մասերի վրա և վկայում է կոմպոզիցիայի գրաֆիկական կենտրոն ունենալու մասին:

Բողոքում նշված է, որ «Маркиза Льюиза» հայտարկված նշանի հետաքրքիր առանձնահատկությունն են հանդիսանում նաև տարրերի վերջին հատվածներում գտնվող «иза» տառերի համակցության կրկնությունը, ինչը տեսողական ընկալման ժամանակ ստեղծում է առաջին տարրի վերջին հատվածի արտացոլումը երկրորդում և նպաստում է, որ նշանն ամբողջությամբ ավելի լավ հիշվի:

Այսպիսով, հայտարկված նշանը սպառողի գիտակցության մեջ ստեղծում է յուրօրինակ գրաֆիկական կերպար՝ ընդգծելով էլեմենտների առաջին տառերը և ստեղծելով վերջին տառերի արտացոլման տեսողական էֆեկտ:

Բողոքարկողը ցանկանում է փորձաքննության ուշադրությունը դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ հայտարկված նշանի երկրորդ՝ «Льюиза» տարրը սկսվում է «Л» կոշտ, ձայնեղ բաղաձայնով, որի շնորհիվ էլ արտասանությունը նույնպես ձայնեղ է դառնում, իսկ շեշտն ընկնում է մեջտեղի «И» վանկի վրա, ինչի արդյունքում էլ՝ «Льюиза» տարրը հնչյունային առումով ընդգծվում է արտասանության ժամանակ և ստեղծում հայտարկված նշանի ձայնային պատկերի առանձնահատուկ կոլորիտ:

Իմաստային առումով «Маркиза Льюиза» հայտարկված նշանը ներկայացված է 2 բառային տարրերով, որոնք իմաստային առումով կապված են և անքակտելի են: Մասնավորապես,

«Маркиза» տարրն ունի մի քանի նշանակություն, բայց հայտարկված նշանում դրա կիրառումը կանացի անվան հետ որոշակիացնում և նեղացնում է վերջինիս նշանակությունը, ինչի հետևանքով էլ այն, միանշանակ, սպառողի կողմից ընկալվում է որպես "մարկիզի կին կամ դուստր Լուիզա անունով:

Ինչպես նշված է բողոքում, հայտարկված «Маркиза Лйиза» նշանը կարող է զուգակցվել նաև հանրահայտ մարկիզուհի Լուիզա Կազատիի հետ, ով իր եզակի և արտասովոր լինելու պատճառով եղել է բազմաթիվ պոետների և նկարիչների մուսան: Բողոքում նշված է, որ հայտարկված նշանի մշակման և մարքեթինգային դիրքը որոշելիս՝ հայտատուն ցանկացել է սպառողի մոտ ասոցիացիաներ առաջացնել մարկիզուհու արտասովոր կերպարի, էկզոտիկ երեկոյթների ու հանդիսությունների հետ՝ դրանով իսկ փոխաբերականորեն հավասարեցնելով կոնֆետները «արվեստի գլուխգործոցներին» և ցուցադրելով դրանց ինքնատիպությունն ու նրբահամ լինելը:

Բողոքարկողը գտնում է, որ հայտարկված և հակադրված ապրանքային նշանների միջև առկա է գրաֆիկական տարբերակիչ հատկություններ և նշանները զգալիորեն տարբերվում են միմյանցից, ինչի հետևանքով էլ գրաֆիկական վերլուծության չափանիշներից ելնելով դրանք չեն կարող դիտարկվել որպես շփոթության աստիճանի նման, ինչպես նաև համեմատվող նշաններն ունեն իմաստային տարբեր նշանակություն, հայտարկված նշանը միանշանակ իր մեջ կրում է ազնվական տիտղոս ունեցող Լուիզա անունով ֆրանսուհու կերպար, ինչպես նաև զուգակցվում է մարկիզուհի Լուիզա Կազատիի հանրահայտ կերպարի հետ, իսկ հակադրված նշանն ունի տարբերակային իմաստ, ինչի հետևանքով էլ կարող է ընկալվել սպառողի կողմից «մարկիզ» բառային տարրի ցանկացած իմաստով, այդ թվում նաև որպես անշունչ առարկա:

Բողոքում նշված է նաև, որ բողոքարկողի արտադրանքն արդեն երկար ժամանակ է, ինչ առկա է Հայաստանի Հանրապետության հրուշակեղենի շուկայում և մեծ ճանաչում է վայելում տեղի սպառողի շրջանում, ինչպես նաև ֆիրմային լոգոտիպի առկայության շնորհիվ զուգակցվում է հենց հայտատու-ընկերության արտադրանքի հետ, ինչն էլ խոչընդոտում է հայտատուի արտադրանքի շփոթելը (այդ թվում հայտարկված նշանով պիտակավորված) այլ արտադրողների արտադրանքի հետ:

Եզրափակելով իր գրությունը՝ բողոքարկողը խնդրում է է վերանայել միջազգային հայտ IR 1044912 «Маркиза Лйиза» ապրանքային նշանի վերաբերյալ կայացված գրանցումը մերժելու մասին նախնական որոշումը և այն գրանցել Հայաստանի Հանրապետության տարածքում՝ 30-րդ դասի հայտարկված բոլոր ապրանքների համար:

Հունվարի 25-ի բողոքարկման խորհրդի նիստում կոլեգիայի անդամի կողմից նշվեց, որ հայտարկված ապրանքային նշանը չի գրանցվել «Маркиза» (ռուս.) շփոթելու աստիճան նման բառային ապրանքային նշանի գրանցման առկայության պատճառով: Համառոտ նշեց, բողոքում մեջբերված հիմնավորումները:

Ընդհանուր քննարկման արդյուքում, բողոքարկման խորհուրդը որոշեց քննարկումը հետաձգել՝ ապրանքային նշանի օգտագործման վերաբերյալ լրացուցիչ փաստարկներ ներկայացնելու նպատակով:

Փետրվարի 28-ի նիստում կոլեգիայի անդամի կողմից նշվեց, որ նախորդ նիստում գործի քննարկումը հետաձգվել էր, որպեսզի բողոքարկողը ներկայացներ լրացուցիչ փաստարկներ 2005 թվականից տվյալ ապրանքային նշանով մականշված ապրանքատեսակների Հայաստանի Հանրապետություն ներկրման վերաբերյալ: Սակայն, բողոքարկողի կողմից լրացուցիչ տեղեկություն չներկայացվեց ներկրկան վերաբերյալ:

Ընդհանուր վերլուծության արդյունքում, կոլեգիան առաջարկեց բողոքը մերժել:

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 2-րդ բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Խարկովսկայա բիսկվիտնայա ֆաբրիկա» ընկերության բողոքը և «Маркиза Лыжа» (հայտի համարը N IR 1045469) բառային ապրանքային նշանի միջազգային գրանցման վերաբերյալ փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա. Ազիզյան